

միայն եւ զԱմիրճանն : Եւ զորդիսն Երեմիային Չաքարիայն՝ զՍիմէոնն եւ զԱւագն :

Դրձլ . յիշեցէք ի Քս . զԵրեմիա քճյն . եւ զմիւս քեռին զՈսկանն եւ զկողակիցն զԵղիսաբեթն եւ զորդիսն իւր զՊաշտուսն եւ զԱսլանն եւ զԳուստրն իւր զԱնթառանն :

Դրձլ . յիշեցէք ի Քս . զքեռի Թաթոսն եւ զգտերսն իւր զՆազրուխանն , զՇահուսն եւ զՓարիխանն :

Դրձլ . յիշեցէք ի Քս . զմիւս քեռին զՊօլիկն եւ զորդին զԳօզալ բէկն եւ զԳուստրն զՄարգարիտն :

Դրձլ . յիշեցէք ի Քս . զԵրեմիա քճյն . եւ զմօրաքոյրն իւր զԵղիսաբեթն եւ զորդիսն զՄարտիրոսն եւ զՂազարն եւ զգտերսն իւր զՓարիխանն եւ զԳուստրն :

... (բաց մի քանի տող) ...

Դրձլ . յիշեցէք ի Քս . ի յոյսն բնաւից զԵրեմիա քճյն . եւ զկողակիցն զՊանաղէն եւ զաներն իւր զտէր Ածատուր . քճյն , որ է հայր Պանաղին , եւ զկողակիցն զՀեղինէն , եւ զորդիսն զԴաւիթն , զԱլէքսանն եւ զՄելքիսեղ սրկւզն . եւ զգտերսն զՊանաղէն , զՊանաղատէն , զԱնթառանն եւ զԳուստրն : //

561ա . Դրձլ . յիշեցէք առ տր . զԵրեմիա քճյն . եւ զկողակիցն զՊանաղէն . եւ զԳոնիսն իւր զՉաքարիայն եւ զՇաղոսիկն , որ ետ զմատենան ծաղկաւէտ ի սրվանքն ածամուխ . Գեղարդին . յիշատակ յաւիտենական եւ անջրնջելի , կալ մնալ անդ մինչեւ ի կտրծ . եւ մի ոք իշխեսցէ հանել ի նմանէ , թէ ազգ , թէ ազինք լիցի . մի ձեռնամուխ լիցի եւ մի՛ խարդախութիւր . յիշատակարանէս հատանել կամ եղծանել կամ իցին , զայնպիսին զպոլիսն . Կայենի եւ Յուդային առցէ եւ նոյնպէս լիցի . ՅԹԼ . հայրապետացն սրբոց եւ ի սրբոյն Գեղարդայ : Այլ աղաչեմ ի սր . եղբարցդ սր . ուխտի միաբանիցդ , որ թէ կարգայք կամ օրինակէք զսր . մատենաս , խնամով պահէք ի հրոյ եւ ի ջրոյ . զի եւ տրն . ամենից պահեսցէ զձեզ յամ . փորձութէ . երեւելեաց եւ յաներեւութից . ամէն : Այլ եւ հայցեմք եւ ազերսեմք զսր . հարսդ եւ զեղբարդ , զի ի տարւոյն երիցս անգամ կարգայք զյիշատակարանս . մին ի ջրօրհնեաց եւ յայտնութեան . եւ մինն ի սր . զատկին՝ որ է յարութին . Քի . : եւ զմինն ի փոխման սր . Ածածնին , որ եղև յաւարտ զրոցս :

Իսկ այս հոգեւոր եւ ածային . մեծափառ դանձուցս եւ փրթթագարդ ծաղկաւէտ բուրաստանս , արեամբ հեղեալ սրբոց մարտիրոսաց՝ նահատակաց . եւ ամ . երամոց սրբոց հնոց եւ նորոց , հաւաքեալ ի մի վայր , վս . մեղաքաւիչ եկեղեցւոյ ընթերցման , եւ ի լուր տճաս մանկանց եւ խառնիճազանչ ըռամկաց . յրդձալ սրտիւ զվարս նոցին հետեւիլ : Իսկ իմաստնոց կատարելոց եւ հանճարեղաց ցանկալ կատարման նոցին կատարել զընթացս իւրեանց . որ եւ արժանի արասցէ պսակաւ եւ վարձատրաւ . (Տ!) տրն . ամենից բնաւից բոլորից ի միւս անգամ զալստեանն իւրոյ ունկնդրօղք եւ լսօղք այսմ մատենիս , մանաւանդ զստացօղ տառիս զԵրեմիա քճյն . եւ զկողակիցն զՊանաղէն եւ զԳոնիսն իւր զՉաքարիայն եւ զՇաղոսիկն , եւ զամ . արեան մեր-

ճաւորսն : Որ եւ օրհնեալ զովեալ եւ բարերանեալ զանուն ամենասր . երրորդութեն . ամէն :

Եւ արդ՝ զօրութիւր . եւ կարողութիւր . ամենագորին Այ . եղև սկիզբն եւ վաղճան յայսմ մատենիս ի վաղարչապատ եւ ի հայրապետանիստ ակթոսն սր . էջմիածին : Բայց զմեծ մասն եւ զլիակատարն զրոցս զրեալ եղև ի զիւղաքաղաքն ի Նորաղաւթ . ընդ հովանեաւ սրբոց եկեղեցեացս անուամբ սրբոյն Գէորգայ եւ սրբոյն Գրիգորի եւ սրբոյն Սարգսի եւ սր . Ածածնին . եւ սր . Կարապետին եւ սր . Ծիրանաւորին եւ սր . Նահատակին , եւ զօրութիւր . եւ յաջողութիւր . հովանաւորութիւր եւ պահպանութիւր . ածամուխ . սր . նշանին Գեղարդայ , եւ սրբոյն Յակոբայ , հատեալ ձեռամբ ի հրշտկէ . Այ . ի տապանէն Նոյի եւ Ծ . խորանացն : Սատարութիւր . եւ սպասաւորութիւր . բարեպաշտօն կնոջն Սառախաթուսին , եւ որդւոյն Յոհանիսին , որ զբաղում աշխատանս արարին ի վր . զրոցս . /

561բ . Եւ ի հայրապետութե . երիցս երանեալ , եւ երջանկացեալ մեծի եւ փառաւորի տեառն Եղիազարութիւղիտի , խորխտի եւ ահարկուի ի վր . այլազգեաց , եւ ոպ . ասէ մրգբէն , եթէ ոչ տր . զօրութեց . թողեալ էր մեզ զաւակ , իրբեւ զՍողոմ լինէաք : Նոյն դունակ եթէ ի տէ . ոչ էր հաստատեալ զսրբազան հրպս . այս ի գահոյս , կոխան ոտից լինէաք տոհմս արեղական , վս . անիրաւ եւ աներկիւղ բռնակալութե . Պարսից . քանդի ոչինչ՝ եւ իրբեւ զփոշի ոտաց համարէին ազգս քրիստոնէից . միթէ ինքն տրն . աղատեսցէ ի ձեռաց ամբարտաւան ազգէս յայսմանէ :

Նաեւ ի թգրութե . Պարսից շահ Սուլէմանին , որդւոյ փոքր Շահապասին . Եւ իշխանութե . Արարատեան նահանդի Չալ խանի : Եւ զայսու ժմիւ . շարժեալ են զօրքն Պարսից՝ խառնիճազանճ բազմութիւր . եւ եկեալ նստեալ կան յերկիրն Աղուանից . եւ կամին զնալ ի վր . ազգին Վրաց : Իսկ ազգն Վրաց միաբանեալ են ընդ հիւսիսային թգրին . Մօսկոպու . եւ նք . եւս զօրս դումարեալ նստեալ կան ի ստորոտ լեռանցն Եւրպուզ կոչեցեալ , որոց են զլիսաւորք որդիք իշխանին Վրաց Շահնագար խան եւ Գօրգի խան կոչեցեալք . ապստամբեալք ի թգրէն . Պարսից . եւ անդէն զետեղեալք կան . այլ զկատարածն Այ . է զիտելի թէ զինչ լինիցի :

Այլ եւ Օսմանեաց թգրութեն . սուլթան Սուլէմանի . որ եւ Սուլէմանս այս կայր ի մէջ զաֆասի յոլով ժամանակաւ բանիւ եղբօրն իւրոյ սուլթան Մահմետի . զի եւ Մահմետս այս գաղանաբարոյ եւ արիւնահեղ բոմ . աւերութիւս . գործեաց առ արեւմտեան քրիստոնեայս . էտո քաղաքս , զաւառս եւ կղզիքս ոչ սակաւ , եւ իրբեւ զվիշապ կլանէր զբոմս , եւ ի յորովայնս ոչինչ գտան իւր . եւ իրբեւ զրելիար բացեալ ունէր զբերանն , զոչէր , հաւաքէր համայն աշխրհս , ոչ յաղենայր եւ ոչ ընոյր զչար ցանկութիւն . իւր . ոպ . ասէ , որդի հարազատ նման հօրն զործէ , նոյնպս . եւ չար Մահմետս որդի հարազատ երեւեցաւ հօրն իւրոյ բելիարայ , որ ոչ պ(ակ)ասեցուցանէր զչարութիւն . ինչ . բայց առաւելուլ կամէր ի վր . հայրենեացն , անխիղճ եւ անողորմ բարուքն .